ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2019 Թ. «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ» ԵՎ «ՀԱՆՐԱՀԱՇԻՎ» ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

IX ԴԱՍԱՐԱՆ

Երևան 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 2
1. Առարկայական նախասիրություններ 2
2. Տնային աշխատանքներ 4
3. Աշակերտների ինտեգրվածությունը դպրոցում 5
4. Աշակերտների ինտեգրվածությունը դասարանում 8
5. Աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններն ըստ աշակերտների 9
Ա. Աշակերտների կարծիքները իրենց հանդեպ ուսուցիչների վերաբերմունքի մասին 9
Բ. Նոր նյութը ավելի մատչելի բացատրելու անհրաժեշտության մասին 11
6. Ազատ ժամանակի կազմակերպման ձևերը 11
Ա. Սոցիալական ցանցերի կիրառությունը 14
Բ. Տնային աշխատանքների համար համացանցից օգտվելը 14
Գ. Համակարգչային խաղերի համար համացանցից օգտվելը 16
7. Աշակերտների սովորելուն նպաստող հանգամանքները 17
8. Ծնողների աջակցությունը աշակերտներին սովորելու հարցում 18
Եզրակացություն 20
Հավելված 24

Ներածություն

2019 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից ՀՀ մարզերի և Երևան քաղաքի 234 հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորող 9-րդ դասարանցիների շրջանում «Հայոց լեզու» և «Հանրահաշիվ» առարկաներից անցկացված արտաքին ընթացիկ գնահատման ժամանակ աշակերտները լրացրել են նաև աշակերտի հարցաթերթ: Ներկայացվում է հարցաթերթի տվյալների վերլուծությունը:

Վերլուծությունն իրականացվել է Excel, Access, IATA և SPSS ծրագրային փաթեթների կիրառմամբ:

Վիճակագրություն

Վերլուծության մեջ ընդգրկված է 6208 աշակերտ, որոնք մասնակցել են արտաքին ընթացիկ գնահատմանը և՛ հայոց լեզվից, և՛ հանրահաշվից, ինչպես նաև մասնակցել են աշակերտի հարցմանը՝ լրացնելով աշակերտի հարցաթերթ (տե՛ս հավելված):

Գնահատման 10 միավորանոց սանդղակում[1] աշակերտների այս համակազմի հայոց լեզվի միջին միավորը 4.77 է (ստանդարտ շեղումը՝ 1.62), իսկ հանրահաշվի միջին միավորը՝ 4.44 (ստանդարտ շեղումը՝ 1.54):

1. Առարկայական նախասիրություններ

Աշակերտների առարկայական նախասիրություններն ուսումնասիրելու համար դիտարկվել են հարցաթերթի *«Նշվածներից ո՞րն է քո ամենասիրած առարկան»* հարցին աշակերտների տրված պատասխանները:

[1] 2019 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ դասարաններում անցկացված արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների մասին ավելի մանրամասն տեղեկություն կարելի է ստանալ վերլուծական նյութից: Վերոնշյալ և այս վերլուծությունների միջև առկա աշակերտների թվերի տարբերությունը բացատրվում է նրանով, որ այս վերլուծությունը վերաբերում է այն աշակերտներին, որոնք արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցել են և՛ հայոց լեզվից, և՛ հանրահաշվից, և միաժամանակ լրացրել են աշակերտի հարցաթերթ:

Դիագրամ 1

Աշակերտների ամենասիրած հանրակրթական առարկան



Մեծ թվով աշակերտների ամենասիրած առարկան «Հայոց լեզուն» է (տե՛ս դիագրամ 1): Համադրվել են տարբեր առարկաներ նախընտրող աշակերտների՝ հայոց լեզվի և մաթեմատիկայի ընթացիկ քննության արդյունքները: «Մաթեմատիկա» առարկան նախընտրողների և՛ մաթեմատիկայի, և՛ հայոց լեզվի արդյունքների միջին միավորները ամենաբարձրն են մյուս առարկաներին նախապատվություն տվողների միջին միավորներից[2]:

Աղյուսակ 1

Աշակերտների ամենասիրած առարկան և միջին միավորները

Առարկայական նախասիրություններ	Հայոց լեզու	Մաթեմատիկա	Տվյալ առարկան ընտրած աշակերտների տոկոսը
Հայոց լեզու	4.71	4.10	**21%**
Մաթեմատիկա	**5.26**	**5.34**	15%
Օտար լեզուներ	4.95	4.46	17%
Հայոց պատմություն	4.72	4.24	11%
Աշխարհագրություն	4.32	4.25	9%

[2] Աղյուսակում ամենամեծ միջին միավորները մգեցված են:

Կենսաբանություն	4.58	4.21	11%
Քիմիա	5.18	4.83	4%
Ֆիզիկա	4.60	4.59	5%
Նշվածներից ոչ մեկը	4.17	4.14	5%
Չի պատասխանել	4.95	4.54	4%

2. Տնային աշխատանքներ

Աշակերտների 21%-ը նշում է, որ տնային աշխատանքներ կատարելիս իրենց օգնում են ընտանիքի անդամները, 6%-ին՝ համադասարանցիները, 2%-ին՝ կրկնուսույցը և 69%-ը նշում է, որ ոչ ոք իրենց չի օգնում: Ստորև նշված աշակերտների խմբերում դիտարկվել է աշակերտների առաջադիմությունը հայոց լեզվից և հանրահաշվից:

Դիագրամ 2

Տնային առաջադրանքների կատարելու համար աշակերտներին օգնողները



Աշակերտների մեծ մասը նշում է, որ տնային առաջադրանքները կատարելիս իրենց ոչ ոք չի օգնում, սակայն այդ կարծիքն արտահայտողների միջին միավորները երկու առարկաներից էլ ամենաբարձրն են (տե՛ս դիագրամ 3): Միջին միավորների երկրորդ մեծ խումբը կազմում են ընտանիքի անդամների օգնությամբ տնային աշխատանքներ կատարողները: Ե՛վ որևէ մեկի աջակցությունը չունեցող, և՛ ընտանիքի անդամների աջակցությունն ունեցող աշակերտների միջին միավորները երկու առարկաներից էլ բարձր են այս ուսումնասիրությանը մասնակցած բոլոր աշակերտների հայոց լեզվի և հանրահաշվի միջին միավորներից (տե՛ս էջ 2):

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 9-րդ դասարանցիները գրեթե չեն դիմում կրկնուսույցի աջակցությանը, կրկնուսույցի ծառայություններից օգտվողների թիվը շատ փոքր է (աշակերտների 2%-ը):

Դիագրամ 3



3. Աշակերտների ինտեգրվածությունը դպրոցում

Աշակերտների 82%-ը չի ցանկանում տեղափոխվել իր դպրոցից այլ դպրոց, մինչդեռ 8%-ը կտեղափոխվի, եթե լինի նման առաջարկ, 10%-ը չի պատասխանել այդ հարցին: Իրենց դպրոցից տեղափոխվել չցանկացողների առաջադիմության միջին միավորները և՛ հայոց լեզվից, և՛ հանրահաշվից մի փոքր ավելի բարձր են (հայոց լեզու՝ 4.80, հանրահաշիվ՝ 4.46) դպրոցից տեղափոխվել ցանկացողների միջին միավորներից (հայոց լեզու՝ 4.53, հանրահաշիվ՝ 4.34): Ասել է թե դպրոցին ինտեգրված աշակերտների ցուցաբերած արդյունքներն ավելի բարձր են, քան այն աշակերտներինը, որոնք նման առաջարկի դեպքում ինչ-ինչ պատճառներով կհամաձայնեն հեռանալ իրենց դպրոցից:

9-րդ դասարանում սովորողների ամենամեծ խումբը հիմնական դպրոցն ավարտելուց հետո պատրաստվում է ուսումը շարունակել քոլեջներում կամ մասնագիտական հաստատություններում (աշակերտների 37%-ը): Մեծ է դեռևս չկողմորոշված աշակերտների թիվը (29%): Աշակերտների 20%-ը ցանկանում է հետագայում սովորել ավագ, 2.5%-ը՝ միջնակարգ դպրոցներում և 3.5%-ը վարժարաններում: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հարցաթերթին պատասխանած 9-րդ դասարանցիների երկրորդ մեծ խումբը 1-ին կիսամյակում դեռևս

չեն կողմնորոշվել հիմնական դպրոցն ավարտելուց հետո իրենց հետագա ուսուցման հարցերում (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Հանրակրթական ուսումնական հաստատության տիպը	Աշակերտների տոկոսը	Հայոց լեզվի միջին միավորը	Հանրահաշվի միջին միավորը
ավագ դպրոց	20	**5.21**	4.78
միջնակարգ դպրոց	2.5	4.77	4.58
վարժարան	3.5	5.11	**4.89**
քոլեջ կամ մասնագիտական հաստատություն	**37**	4.78	4.43
չի կողմնորոշվել	29	4.48	4.22
չի պատասխանել	8	4.55	4.27

Աշակերտների վերոնշյալ խմբերում առաջադիմության ցուցանիշները հետևյալն են. հայոց լեզվի ամենաբարձր միջին միավորը ավագ դպրոցներում սովորել ցանկացողներինն է, իսկ հանրահաշվինը՝ վարժարաններում սովորել ցանկացողներինը: Երկու առարկաների դեպքում էլ մոտ ապագայում իրենց հետագա ուսման հարցում չկողմնորոշվածների միջին գնահատականները նշանակալիորեն ցածր են և՛ ավագ դպրոցներ, և՛ վարժարաններ գնալ ցանկացողների միջին միավորներից:

«Եթե դասղեկը ասեր, որ ոչ բոլորի համար է պարտադիր վաղը դպրոց գալը, ինչպե՞ս կվարվեիր» հարցին ուսումնասիրությանը մասնակցած աշակերտների 46%-ը նշել է, որ կգային դպրոց, 16%-ը կնախընտրեր մնալ տանը, իսկ 31%-ը չգիտի ինչպես կվարվեր: Այսինքն, նման առաջարկի դեպքում աշակերտների զգալի խումբ կցանկանար դպրոց գնալ: Դիտարկվել են աշակերտների այդ երեք խմբերի առաջադիմության ցուցանիշները, դրանք գրեթե չեն տարբերվում: Կարելի է եզրակացնել, որ դպրոցը, բացի կրթական հաստատություն լինելուց, հանդիսանում է նաև աշակերտների սոցիալիզացիայի միջավայր, որտեղ և՛ լավ սովորողները, և՛ ոչ այդքան լավ սովորողները ուզում են լինել՝ անկախ այն բանից՝ այդ օրը դասեր կան, թե ոչ:

Ուսումնասիրվել է, թե որ հոսքերում են նախընտրում սովորել ուսումը ավագ դպրոցներում շարունակել ցանկացող աշակերտները: Դիագրամ 4-ում տեսնում ենք, որ հումանիտար հոսքերում սովորել ցանկացողները թվով ավելի շատ են:

Դիագրամ 4

Ավագ դպրոցում սովորելու պարագայում հոսքերի ընտրությունը



Դիտարկվել են աշակերտների՝ հայոց լեզվի և հանրահաշվի միջին միավորները ըստ նրանց կողմից ավագ դպրոցներում սովորելու դեպքում հոսքերի ընտրությունը:

Աղյուսակ 3

Ավագ դպրոցում սովորել ցանկացող աշակերտների հոսքերի ընտրությունը և միջին միավորները

Միջին միավորները / Հոսքերը	Հայոց լեզու	Հանրահաշիվ	Աշակերտների տոկոսը
ընդհանուր	4.69	4.38	13
բնագիտական	5.36	4.86	13
ֆիզիկամաթեմատիկական	5.60	**5.63**	11
տնտեսագիտական	**5.72**	5.38	20
հումանիտար	5.10	4.42	**35**
չի նշել	4.37	4.09	7

Հայոց լեզվից ամենաբարձր միջին միավորը տնտեսագիտական, իսկ հանրահաշվից՝ ֆիզիկամաթեմատիկական հոսքերում սովորել ցանկացողներինն է: Աղյուսակ 3-ում նկատում ենք նաև, որ ամենացածր միջին միավորները ընդհանուր հոսքեր գնալ ցանկացողներինն է:

Ցանկացել ենք պարզել՝ արդյոք կա՞ հոսքերի և սիրած առարկայի ընտրությունների միջև համապատասխանություն (տե՛ս դիագրամ 5):

Դիագրամ 5



Նկատում ենք, որ աշակերտների նախընտրած հոսքերի և սիրած առարկայի ընտրությունների միջև կա տրամաբանական կապ: Օրինակ, բնագիտական հոսքերում սովորել ցանկացողները ավելի շատ նշել են, որ իրենց սիրած առարկան կենսաբանությունն է, ֆիզիկամաթեմատիկականում և տնտեսագիտականում սովորել ցանկացողները՝ մաթեմատիկան, հումանիտարում՝ հայոց լեզուն, օտար լեզուն և հայոց պատմությունը:

4. Աշակերտների ինտեգրվածությունը դասարանում

Աշակերտների 80%-ը համամիտ է, 5%-ը դժվարանում է պատասխանել, իսկ 2%-ը համամիտ չէ, որ

- *իրենք շատ ընկերներ ունեն դասարանում,*
- *իրենց դուր են գալիս իրենց դասընկերները,*
- *առավոտյան իրենք հաճույքով են գնում դպրոց:*

Աշակերտների 13%-ը չեն պատասխանել վերոնշյալ պնդումներին: Դիագրամ 6-ում ներկայացված են աշակերտների երեք խմբերում նրանց առաջադիմության միջին միավորները հայոց լեզվից և հանրահաշվից: Վերոնշյալ պնդումներին ոչ համամիտ աշակերտների միջին միավորները մի փոքր ավելի բարձր են դրանց համամիտ աշակերտների միջին միավորներից, սակայն խմբերն անհավասարաչափ են բաշխված, և ընդհանուր առմամբ որևէ օրինաչափություն չի դիտարկվում:

Դիագրամ 6



5. Աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերություններն ըստ աշակերտների

Ա. Աշակերտների կարծիքները իրենց հանդեպ ուսուցիչների վերաբերմունքի մասին

Աշակերտների հարցման տվյալների վերլուծության արդյունքում պարզվել է, որ աշակերտների զգալի մեծամասությունը գոհ է իրենց հանդեպ ուսուցիչների վերաբերմունքից:

Դիագրամ 7

Աշակերտների կարծիքները իրենց հանդեպ ուսուցիչների վերաբերմունքից



Դիագրամ 7-ում երևում է, որ աշակերտների ճնշող մեծամասնությունը գոհ է իրենց նկատմամբ հայոց լեզվի և մաթեմատիկայի ուսուցիչների վերաբերմունքից: Ուսուցիչների վերաբերմունքի վերաբերյալ աշակերտների կարծիքներով պայմանավորված՝ աշակերտների խմբերում նրանց միջին միավորների պատկերը ներկայացվում է ստորև բերված դիագրամ 8-ում:

Դիագրամ 8 ա,բ





Նկատում ենք, որ հայոց լեզվից և հանրահաշվից ամենաբարձր միջին միավորներն ունեն ուսուցիչների վերաբերմունքից գոհ աշակերտները, իսկ այլ կարծիք արտահայտած մնացած բոլոր խմբերի աշակերտները փոքրաթիվ են (տե՛ս դիագրամ 7):

Բ. Նոր նյութը ավելի մատչելի բացատրելու անհրաժեշտության մասին

Աշակերտների 57%-ը հաճախ է ցանկություն ունենում, որ ուսուցիչը նոր նյութը ավելի մանրամասն բացատրի, որպեսզի ավելի մատչելի լինի, 23%-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին, 15%-ը՝ նման ցանկություն չի հայտնել, իսկ 5%-ը չի պատասխանել: Վերոնշյալ կարծիքներ արտահայտած աշակերտների խմբերում առաջադիմության միջին միավորները և՛ հայոց լեզվից, և՛ հանրահաշվից վիճակագրորեն միմյանցից չեն տարբերվում: Այսինքն, և՛ լավ սովորողները, և՛ ոչ այդքան լավ սովորողները մեծամասամբ ցանկություն ունեն, որ նոր նյութը ավելի մանրամասն բացատրվի, որպեսզի ավելի մատչելի լինի:

Դիտարկվել է աշակերտների այն բազմությունը, որը հաճախ ցանկություն է ունենում, որ ուսուցիչը նոր նյութը ավելի մանրամասն բացատրի, որպեսզի ավելի մատչելի լինի: Այս բազմության աշակերտների 47%-ը դասերի ժամանակ հաճախ ձեռք է բարձրացնում, որպեսզի պատասխանի ուսուցչին, չսպասելով, թե երբ իրեն կհարցնեն, 34%-ը դժվարացել է պատասխանել, 16%-ը համամիտ չէ, 3%-ը չի պատասխանել: Աշակերտների բազմության վերոնշյալ 47%-ը մաթեմատիկայի միջին միավորը վիճակագրորեն մի փոքր ավելի բարձր է այն աշակերտների հանրահաշվի միջին միավորներից, որոնք նույնպես «պահանջկոտ են», սակայն դժվարանում են ասել՝ առանց սպասելու ուսուցչի հարցմանը դասերի ժամանակ ձեռք կբարձրացնե՞ն, թե՞ ոչ:

6. Ազատ ժամանակի կազմակերպման ձևերը

Հարցման ենթարկված աշակերտների մեծամասնությունն ազատ ժամանակ երբեմն է գիրք կարդում, հաճախ է օգտվում համացանցից և հաճախ հանդիպում ընկերների հետ: Աշակերտները հաճախ չեն հեռուստացույց դիտում: Համադրվել են աշակերտների առաջադիմությունն ու նրանց ազատ ժամանակի կազմակերպման և անցկացման նախասիրությունները:

Դիագրամ 9ա

Հայոց լեզվի միջին միավորները
ըստ ազատ ժամանակի կազմակերպման ձևերի



Հարկավոր է ընդգծել, որ հաճախ գրքեր կարդացողների հայոց լեզվի միջին միավորը նշանակալիորեն բարձր է գրքեր երբեք չկարդացողների և հարցաթերթի այդ հարցին չպատասխանած աշակերտների միջին միավորներից:

Ինչպես նկատում ենք, հայոց լեզվից ամենաբարձր միջին միավորն ունեն հաճախ գրքեր կարդացող աշակերտները (5.20): Հաջորդ բարձր միջին միավորներն ընկերների հետ երբեմն հանդիպողներինն է (5.04) և հեռուստացույց երբեք չդիտողներինը (5.03): Համացանցից տարբեր հաճախությամբ օգտվողների առաջադիմության միավորներն էապես չեն տարբերվում իրարից, և այս վերլուծության սահմաններում չենք կարող պնդել, թե ազատ ժամանակի նման կազմակերպումը ինչպես է անդրադառնում աշակերտների ընդհանուր առաջադիմության վրա:

Դիտարկվել է տնային աշխատանքները որևիցե մեկի աջակցությամբ կատարող աշակերտների (31%) և առանց որևէ մեկի աջակցության կատարող աշակերտների (69%) ազատ ժամանակի կազմակերպման մի քանի հարցեր:

Դիագրամ 9բ

Հանրահաշվի միջին միավորները
ըստ ազատ ժամանակի կազմակերպման ձևերի



Դիագրամ 9 ա, բ-ում նկատում ենք, որ և՛ հայոց լեզվից, և՛ հանրահաշվից ամենաբարձր միջին միավորները հաճախ գրքեր կարդացող աշակերտներինն են, շատ փոքր տարբերությամբ՝ նաև հեռուստացույց երբեք չդիտողներինը: Երկու դիագրամներում էլ նկատում ենք, որ ամենացածր առաջադիմությամբ հանդես են եկել այն աշակերտները, որոնք չեն պատասխանել հարցաթերթի տվյալ հարցերին:

Համացանցից օգտվելու անհրաժեշտությունը հիմնականում պայմանավորված է սոցիալական ցանցերում շփվելով, համակարգչային խաղերով զբաղվելով և տնային աշխատանքների կատարմամբ: Դիտարկվել է համացանցի վերոնշյալ կիրառությունների դեպքում աշակերտների տոկոսը՝ պայմանավորված նրանց սեռով:

Ա. Սոցիալական ցանցերի կիրառությունը

Դիագրամ 10



Մեծ թվով աշակերտներ հաճախ համացանցը օգտագործում են սոցցանցեր մուտք գործելու նպատակով: Ի դեպ, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ հարցում տղաների վերոնշյալ խումբը աղջիկների խմբից ավելի մեծ է:

Բ. Տնային աշխատանքների համար համացանցից օգտվելը

Դիագրամ 11-ում երևում է, որ տնային աշխատանքների կատարման համար համացանցից հաճախ օգտվողների մեջ ավելի շատ են աղջիկները:

Դիագրամ 11



Տնային աշխատանքների կատարման համար համացանցից երբեք չօգտվողների և՛ հայոց լեզվի, և՛ հանրահաշվի միջին միավորները նշանակալիորեն բարձր են համացանցից հաճախ օգտվողների միջին միավորներից (տե՛ս դիագրամ 12):

Դիագրամ 12



Գ. Համակարգչային խաղերի համար համացանցից օգտվելը

Համակարգչային խաղեր խաղալու համար համացանցից հաճախ օգտվողների մեծ մասը տղաներն են, իսկ երբեմն օգտվողների մեծ մասը՝ աղջիկները (տե՛ս դիագրամ 13):

Դիագրամ 13

Համակարգչային խաղերի համար համացանցից օգտվողները ըստ սեռերի



Դիտարկվել են նաև աշակերտների առաջադիմության միջին միավորները համացանցից տարբեր հաճախությամբ օգտվողների շրջանում:

Դիագրամ 14

Համակարգչային խաղերի համար համացանցից օգտվողները ըստ սեռերի



Դիագրամ 14-ից նկատում ենք, որ համացանցից խաղերի համար երբեք չօգտվողների առաջադիմությունը երկու առարկաներից էլ ամենաբարձրն է և այն վիճակագրորեն նշանակալի բարձր է խաղերի համար համացանցից հաճախ օգտվողների միջին միավորներից:

7. Աշակերտների սովորելուն նպաստող հանգամանքները

Աշակերտները ձգտում եմ ավելի լավ սովորել, որովհետև նրանց ամենամեծ խումբը շատ լավ հասկանում է, որ սովորելն անհրաժեշտ է լավ մասնագիտություն ձեռք բերելու համար (տե՛ս դիագրամ 15):

Դիագրամ 15

Աշակերտը ձգտում է ավելի լավ սովորել, որովհետև …



Դիտարկվել է աշակերտների վերոնշյալ ամենամեծ խումբը, որոնք նշել են, որ հասկանում են, որ սովորելն անհրաժեշտ է լավ մասնագիտություն ձեռք բերելու համար (աշակերտների 78.5%):

Դիագրամ 16



Դիագրամ 16-ում նկատում ենք, որ և՛ հայոց լեզվից, և՛ հանրահաշվից աշակերտների ամենաբարձր միջին միավորները այն աշակերտներինն են, որոնց կարծիքով սովորելն անհրաժեշտ է լավ մասնագիտություն ձեռք բերելու համար: Այս կարծիքն արտահայտողների միջին միավորները նշանակալիորեն բարձր են մյուս բոլոր կարծիքներն արտահայտողների միջին միավորներից:

Աշակերտների ամենամեծ խումբը (63%-ը) նշում է, որ ուսման գործընթացում իրենց ամենից շատ հաճույք է պատճառում գիտակցելը, որ հարստացրել են իրենց գիտելիքները, 29%-ը նշում է, որ իրենց հաճույք է պատճառում ընկերների շրջապատում գտնվելը, իսկ 6%-ը՝ բարձր գնահատականներ ստանալը:

Դիագրամ 17



8. Ծնողների աջակցությունը աշակերտներին սովորելու հարցում

Ինչպես արդեն նշվեց վերևում, աշակերտների 22%-ը նշել է, որ տնային հանձնարարությունները կատարելիս իրենց օգնում են ծնողները (էջ 4, դիագրամ 2):

Ուսումնասիրված աշակերտների միայն 2%-ն է նշել, որ իրենք ավելի լավ են սովորում, քանի որ ծնողներն են ստիպում (էջ 18, դիագրամ 15): Հարցաթերթի մի խումբ հարցերի պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ ծնողական աջակցությունը մեծամասամբ նպաստում է աշակերտների լավ սովորելուն, քանի որ նրանց 84%-ը համամիտ է, 2.5%-ը դժվարանում է պատասխանել, իսկ որ 3.5%-ը համամիտ չէ, որ՝

- *իրենց ծնողները հետևում են, որ աշակերտները կատարեն տնային աշխատանքները,*
- *ծնողները հետաքրքրվում են, թե աշակերտները ինչ սովորեցին դպրոցում,*
- *աշակերտները խոսում են ծնողների հետ իրենց դպրոցական կյանքի մասին:*

Աշակերտների մնացած 10%-ը չի պատասխանել այս հարցերին:

Դիագրամ 18

Ծնողների աջակցության առկայությունն և աշակերտների միջին միավորները



Այն աշակերտները, ովքեր համամիտ չեն վերոնշյալ երեք պնդումների հետ, կազմում են հարցման ենթարկված աշակերտների 3.5 %-ը և ցուցաբերել են ամենաբարձր միջին միավորները և՛ հայոց լեզվից, և՛ հանրահաշվից: Սակայն դիագրամ 18-ում բերված միջին միավորների համադրությունների վերաբերյալ եզրակացություն չենք անում, քանի որ հարցերին պատասխանել դժվարացողների և այդ պնդումներին համամիտ չլինողների խմբերում աշակերտների թիվը փոքր է:

Եզրակացություն

Աշակերտների սիրած առարկան

- Աշակերտների մեծ խմբի ամենասիրած առարկան հայոց լեզուն է: Սակայն մաթեմատիկան ամենաշատ սիրողների և՛ հայոց լեզվի, և՛ հանրահաշվի միջին միավորները ամենաբարձրն են մյուս հանրակրթական առարկաները նախընտրողների միջին միավորներից:

Տնային աշխատանքների կատարմանն աջակցողները

- Աշակերտների զգալի մեծ խումբը նշում է, որ իրենք տնային աշխատանքերը կատարում են ինքնուրույն: Ինքնուրույն տնային հանձնարարությունները կատարողների միջին միավորները և՛ հայոց լեզվից, և՛ հանրահաշվից ամենաբարձրն են ծնողների կամ ընկերների օգնությամբ տնային աշխատանքները կատարողների ցուցանիշներից:

Աշակերտների ինտեգրվածությունը դպրոցում

- Աշակերտների ճնշող մեծամասնությունը չի ցանկանում տեղափոխվել իր դպրոցից, մինչդեռ կա աշակերտների մի փոքր խումբ, որը կցանկանար տեղափոխվել այլ դպրոց նման առաջարկի դեպքում:
- Դպրոցից տեղափոխվել չցանկացողների միջին միավորները ավելի բարձր են դպրոցից տեղափոխվել ցանկացողների միջին միավորներից:
- Աշակերտները նաև սիրում են դպրոցում լինել, քանի որ նրանց գրեթե կեսը համաձայն է «վաղը դպրոց գալ, նույնիսկ եթե դասղեկի հրահանգմամբ դրա կարիքը չկա»: Աշակերտների այս խումբը սիրում է դպրոցում լինել, որը պայմանավորված չէ նրանց միջին միավորների բարձր կամ ցածր լինելու հանգամանքով:

Դասարանում աշակերտների ինտեգրվածությունը և առաջադիմությունը

Մեծ թվով աշակերտներ պնդում են, որ դասարանում իրենք շատ ընկերներ ունեն և իրենց դուր են գալիս իրենց համադասարանցիները, նրանք նշում են նաև, որ առավոտյան հաճույքով են գնում դպրոց: Ամենաբարձր առաջադիմությունն այն աշակերտներինն է, որոնք այդ պնդումներին համամիտ չեն, սակայն այդպիսի աշակերտների թիվը շատ փոքր է:

Հիմնական դպրոցն ավարտելուց հետո աշակերտների հետագա կրթության նախասիրությունները

- Աշակերտների միայն 1/5 մասն է ցանկանում հետագայում սովորել ավագ դպրոցներում: Սակայն 9-րդ դասարանի առաջին կիսամյակում դեռևս չկողմնորոշված աշակերտների թիվը մեծ է և տարեվերջին որոշակի թվով աշակերտներ նոր կմիանան հետագայում ավագ դպրոցներում կամ այլ ուսումնական հաստատություններում սովորել ցանկացողներին:
- Ավագ դպրոցներում իրենց հետագա կրթությունը շարունակել ցանկացողները արտահայտել են նաև իրենց ցանկությունը հոսքերի ընտրության հարցում: Մեծ թվով աշակերտներ ցանկանում են սովորել հումանիտար հոսքում, որը նորից հաստատում է հետագայում հումանիտար հոսքերում թվով ավելի շատ աշակերտներ ունենալու հանգամանքը:
- Առաջադիմության ցուցանիշներում արդեն նկատվում է, որ այն աշակերտները, որոնք ցանկանում են հետագայում սովորել ավագ դպրոցների տնտեսագիտական հոսքում, ամենաբարձր միջին միավորներն են ցուցաբերել հայոց լեզվից, իսկ հանրահաշվից ամենաբարձր միջին միավորները ֆիզիկամաթեմատիկական հոսքում սովորել ցանկացողներիննն է:
- Ամենացածր միջին միավորները և՛ հայոց լեզվից, և՛ հանրահաշվից ընդհանուր հոսքերում սովորել ցանկացողներիննն է:
- Դիտարկվել է նաև հիմնական դպրոցներն ավարտելուց հետո ավագ դպրոցներում սովորել ցանկացողների սիրած առարկայի և նախընտրած հոսքերի կապը: Նկատվել է աշակերտների վերոնշյալ նախընտրություններում տրամաբանական կապեր:

Աշակերտների գոհունակությունը իրենց ուսուցիչների վերաբերմունքից

- Աշակերտների զգալի մեծամասությունը գոհ է ուսուցիչների՝ իրենց հանդեպ ունեցած վերաբերմունքից: Սակայն ուսուցիչների կողմից աշակերտի հանդեպ ունեցած վերաբերմունքի գոհունակության տարբեր դրսևորումներով պայմանավորված՝ աշակերտների խմբերում նրանց առաջադիմության միջին միավորները և՛ հայոց լեզվից, և՛ հանրահաշվից միմյանցից չեն տարբերվում:
- Ուսումնասիրված 9-րդ դասարանի աշակերտների կեսից ավելին հաճախ է ցանկություն ունենում, որ ուսուցիչը նոր նյութը ավելի մանրամասն բացատրի, որպեսզի ավելի մատչելի լինի: Ե՛վ հայոց լեզվից, և՛ հանրահաշվից առաջադիմության միջին միավորները վերոնշյալ կարծիքներն արտահայտած աշակերտների խմբերում միմյանցից չեն տարբերվում: Այսինքն, և՛ լավ

սովորողները, և՛ ոչ այնքան լավ սովորողները մեծամասամբ ցանկություն ունեն, որ նոր նյութը ավելի մանրամասն բացատրվի, որպեսզի ավելի մատչելի լինի:

Ազատ ժամանակի կազմակերպման ձևերը

- Ուսումնասիրվել են աշակերտների ազատ ժամանակն օգտագործելու հիմնական ուղղությունները: Դրանք են՝ գրքեր կարդալը, համացանցից օգտվելը, ընկերների հետ հանդիպելը և հեռուստացույց դիտելը:
- Մեծամասամբ աշակերտները երբեմն են գրքեր կարդում: Սակայն հաճախ գրքեր կարդացող աշակերտների միջին միավորները և՛ հայոց լեզվից, և՛ հանրահաշվից նշանակալիորեն բարձր են երբեք գրքեր չկարդացողների միջին միավորներից:
- Աշակերտների մեծամասնությունը նաև հաճախ է հանդիպում ընկերներին և հաճախ է օգտվում համացանցից:
- Մեծ թվով աշակերտներ նաև երբեմն հեռուստացույց են դիտում:
- 9-րդ դասարանցիները համացանցից հիմնականում օգտվում են տնային աշխատանքների կատարման, սոցիալական ցանցեր մուտք գործելու և համակարգչային խաղեր խաղալու նպատակով: Դիտարկվել է համացանցի վերոնշյալ կիրառությունների դեպքում աշակերտների հաճախությունը՝ պայմանավորված նրանց սեռով:

Համացանցի ազդեցությունը աշակերտների առօրյայում

1. ***Սոցիալական ցանցեր***

- Աշակերտների մեծաթիվ խումբը հաճախ համացանցը օգտագործում է սոցցանցեր մուտք գործելու նպատակով: Ի դեպ, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ հարցում տղաների վերոնշյալ խումբը աղջիկների խմբից ավելի մարդաշատ է:

2. ***Տնային հանձնարարություններ***

- Տնային աշխատանքների կատարման համար համացանցից երբեք չօգտվող աշակերտների և՛ հայոց լեզվի, և՛ հանրահաշվի միջին միավորները նշանակալիորեն բարձր են համացանցից հաճախ օգտվողների միջին միավորներից:
- Աղջիկների մեծ խումբը տնային աշխատանքների կատարման համար հաճախ է օգտվում համացանցից, իսկ տղաների մեծ խումբը՝ երբեմն:

3. Համակարգչային խաղեր

- Տնային աշխատանքների կատարման համար համացանցից երբեք չօգտվողների շրջանում և՛ հայոց լեզվի, և՛ հանրահաշվի միջին միավորները նշանակալիորեն բարձր են նույն պատճառով համացանցից հաճախ օգտվողների միջին միավորներից:
- Համակարգչային խաղեր խաղալու համար համացանցից հաճախ օգտվողների մեջ մեծ թիվ են կազմում տղաները, իսկ երբեմն օգտվողների մեջ՝ աղջիկները:
- Նկատեցինք, որ և՛ տնային հանձնարարությունների կատարման համար, և՛ համակարգչային խաղեր խաղալու համար համացանցից հաճախ օգտվողների առաջադիմության միջին միավորները նշանակալիորեն ցածր են այդ նպատակներով համացանցից երբեք չօգտվողների միջին միավորներից:

Աշակերտների ավելի լավ սովորելուն նպաստող հանգամանքները

- Աշակերտները ձգտում եմ ավելի լավ սովորել, որովհետև նրանց ամենամեծ խումբը շատ լավ հասկանում է, որ սովորելն անհրաժեշտ է լավ մասնագիտություն ձեռք բերելու համար:
- Այս կարծիքը կիսողների միջին միավորները նշանակալիորեն բարձր են մյուս բոլոր կարծիքներն արտահայտողների միջին միավորներից:
- Աշակերտների ամենամեծ խումբը նշում է, որ ուսման գործընթացում իրենց ամենից շատ հաճույք է պատճառում գիտակցելը, որ հարստացրել են իրենց գիտելիքները:

Ծնողների աջակցությունը

- Մեծաթիվ է 9-րդ դասարանցիների այն խումբը, որը համամիտ է, որ կա ծնողների աջակցություն, որը պայմանավորված է այն բանով, որ
  1. ծնողները հետևում են, որ իրենք կատարեն տնային աշխատանքները,
  2. ծնողները հետաքրքրվում են, թե երեխաները ինչ սովորեցին դպրոցում,
  3. աշակերտները խոսում են ծնողների հետ իրենց դպրոցական կյանքի մասին:

Սակայն կա աշակերտների մի փոքր խումբ, որը համամիտ չէ ծնողների աջակցության վերաբերյալ պնդումներին, և նրանց առաջադիմության միջին միավորները ամենաբարձրն են:

Հավելված

ԱՇԱԿԵՐՏԻ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Հարգելի՛ աշակերտ, հարցաթերթիկը, որը լրացնում ես հիմա, պարունակում է հարցեր քո մասին: Չկան «ճիշտ» կամ «սխալ», «լավ» կամ «վատ» պատասխաններ: Հարցերին պատասխանելու համար երկար մի՛ մտածիր: Հարցաթերթիկի քո պատասխանները չեն տրամադրվելու որևէ մեկին, դրանք անհրաժեշտ են դպրոցական համակարգը բարելավելու համար, ուստի աշխատի՛ր պատասխանել անկեղծ:

1. Նշվածներից ո՞րն է քո ամենասիրած առարկան: (Նշի՛ր միայն մեկ վանդակ)՝

- ☐ հայոց լեզու և հայ գրականություն
- ☐ հայոց պատմություն
- ☐ քիմիա
- ☐ մաթեմատիկա
- ☐ կենսաբանություն
- ☐ աշխարհագրություն
- ☐ օտար լեզու
- ☐ ֆիզիկա
- ☐ նշվածներից ոչ մեկը

2. Ո՞վ է օգնում քեզ կատարելու տնային աշխատանքները:

- ☐ իմ ընտանիքի անդամները
- ☐ կրկնուսույցը
- ☐ համադասարանցիներս
- ☐ ոչ ոք

3. Համամի՞տ ես արդյոք հետևյալ պնդումներին:

	Համամիտ եմ	Դժվարանում եմ պատասխանել	Համամիտ չեմ
1. Դասարանում ես շատ ընկերներ ունեմ:	☐	☐	☐
2. Ծնողներս հետևում են, որ ես կատարեմ իմ տնային աշխատանքները:	☐	☐	☐
3. Ծնողներս հետաքրքրվում են, թե ինչ սովորեցի դպրոցում:	☐	☐	☐
4. Ես խոսում եմ ծնողներիս հետ իմ դպրոցական կյանքի մասին:	☐	☐	☐
5. Հաճախ եմ ցանկություն ունենում, որ ուսուցիչը նոր նյութը ավելի մանրամասն բացատրի, որպեսզի ավելի մատչելի լինի:	☐	☐	☐
6. Առավոտյան, երբ արթնանում եմ, հաճույքով եմ գնում դպրոց:	☐	☐	☐
7. Գոհ եմ այն վերաբերմունքից, որը ցուցաբերում է հայոց լեզվի ուսուցիչը իմ նկատմամբ:	☐	☐	☐
8. Գոհ եմ այն վերաբերմունքից, որը ցուցաբերում է մաթեմատիկայի ուսուցիչը իմ նկատմամբ:	☐	☐	☐
9. Դասերի ժամանակ ես հաճախ եմ ձեռք բարձրացնում, որպեսզի պատասխանեմ ուսուցչի հարցերին. չեմ սպասում, թե երբ ինձ կհարցնեն:	☐	☐	☐
10. Ինձ դուր են գալիս իմ համադասարանցիները:	☐	☐	☐

4. Եթե քեզ առաջարկեին տեղափոխվել այլ դպրոց, կհամաձայնեի՞ր:

Այո ☐ ոչ ☐

5. Որտե՞ղ ես պատրաստվում շարունակել ուսումդ հիմնական դպրոցն ավարտելուց հետո:

- ☐ ավագ դպրոցում
- ☐ միջնակարգ դպրոցում
- ☐ վարժարանում
- ☐ բոլեջում կամ մասնագիտական այլ հաստատությունում
- ☐ Դեռ չեմ կողմնորոշվել:

6. Եթե գնաս ավագ դպրոց, ո՞ր հոսքում կուզենաս սովորել (եթե գնալու ես այլ հաստատություն, մի՛ նշիր ոչ մի տարբերակ և անցի՛ր հաջորդ հարցին):

- ☐ ընդհանուր
- ☐ ֆիզիկամաթեմատիկական
- ☐ հումանիտար
- ☐ բնագիտական
- ☐ տնտեսագիտական

7. Ես ձգտում եմ լավ սովորել, որովհետև (նշի՛ր միայն մեկ վանդակ)՝

- ☐ սիրում եմ լավ գնահատականներ ստանալ
- ☐ ծնողներս են ստիպում
- ☐ հաճույք եմ ստանում սովորելուց
- ☐ հասկանում եմ, որ սովորելը անհրաժեշտ է լավ մասնագիտություն ձեռք բերելու համար

8. Ուսման գործընթացում ինձ ամենից շատ հաճույք է պատճառում (նշի՛ր միայն մեկ վանդակ)՝

- ☐ բարձր գնահատականներ ստանալը
- ☐ ընկերների շրջապատում գտնվելը
- ☐ գիտակցելը, որ հարստացրել եմ գիտելիքներս

9. Եթե դասղեկը ասեր, որ ոչ բոլորի համար է պարտադիր վաղը դպրոց գալը, ինչպե՞ս կվարվեիր:

- ☐ Միևնույն է, կգայի դպրոց:
- ☐ Կմնայի տանը:
- ☐ Չգիտեմ:

10. Ազատ ժամանակ որքա՞ն ես զբաղվում հետևյալներով:	Հաճախ	Երբեմն	Բոլորովին չեմ զբաղվում
1. Գիրք կարդալ	☐	☐	☐
2. համացանցից օգտվել	☐	☐	☐
3. ընկերների հետ հանդիպել	☐	☐	☐
4. հեռուստացույց դիտել	☐	☐	☐

11. Համացանցում ի՞նչ հաճախականությամբ ես օգտվում հետևյալներից:	Հաճախ	Երբեմն	Բոլորովին չեմ օգտվում
1. Սոցիալական ցանցեր	☐	☐	☐
2. տնային աշխատանքների կատարում	☐	☐	☐
3. խաղեր	☐	☐	☐

Շնորհակալություն հարցաթերթիկը լրացնելու համար